Եղիշե Չարենց

Ամբոխները խելագարված



eMatenadaran

Եղիշե Չարենց
Ամբոխները խելագարված

http://www.litres.ru/pages/biblio_book/?art=24431270
Ամբոխները խելագարված:
ISBN 9781772468045

Аннотация

«Ամբոխները խելագարված» պոեմը գրել է 1919թ.: 1917թ., երբ Ռուսաստանը մի ծայրից մյուսը ապրում էր հեղափոխության ազատարար շնչով, ոտի ելած ժողովրդի պայքարը, հեղափոխության վիթխարի տարիներին ու վեհությունն արտահայտելու համար նա գրեց «Ամբոխները խելագարված» պոեմը: «Ամբոխները խելագարված» պոեմում հեղափոխությունը ներկայացվում է քաղաքների, գյուղերի, ու ստեպների ժողովրդական զանգվածների միջոցով: Պոեմում ժողովուրդը դուրս է եկել հին աշխարհ կործանելու եւ նորը կառուցելու համար: Չարենցը մեծարում է ժողովրդական հեղափոխական կամքը, նրա դյուցազնական ոգին, նպատակների պատմական վեհությունը:

Содержание

I 4
II 5
III 6
IV 7
V 9
Конец ознакомительного фрагмента. 10

Եղիշե Չարենց
Ամբոխները խելագարված

I

Հեռո՛ւ, մոտիկ ընկերներին, – աշխարհներին, արևներին, —
Հրանման հոգիներին: —
Բոլո՜ր նրանց, ում որ հոգին վառվում է վառ, —
Բոլո՜ր նրանց հոգիներին արևավառ, —
Կյանքի՜, մահի՜ այս ամեհի աղջամուղջում՝
Ողջակիզվող հոգիներին – ողջո՜ւյն, ողջո՜ւյն: —

II

Իրիկուն էր, հրակարմիր մի իրիկուն:
Արևը, բորբ՝ մայր էր մտնում արևմուտքում:
Դաշտի վրա փռվել էր մուժ արյունամած՝
Թույն էր կարծես՝ բորբ արևի սրտից քամած:
Արևը, թեժ՝ մայր էր մտնում արևմուտքում —
Ու արյուն էր դաշտի վրա, թո՛ւյն էր թքում:
Հորիզոնում վառել էր մի կարմիր քուրա —
Ու արնավառ փայլ էր փռում դաշտի վրա:
Ու արտերը, ալեծածան, վառվել էին
Արեգակի կարմիր փայլով իրիկնային: —
Դաշտը, անծայր ու անսահման, լայնատարած՝

Հրակարմիր տարածվել էր նրանց առաջ: —
Ծով էր կարծես, որ սկիզբ ու սահման չունի —
Ծով էր կարծես՝ մշուշի մեջ իրիկունի: —

III

Արևի տակ իրիկնային, իրիկնային հրով վառված՝
Այդ հին դաշտում կռվում էին ամբոխները խելագարված:
Քաղաքներից ու գյուղերից, ստեպներից հեռու ու մոտ՝
Եկել էին նրանք նորից՝ հուսավառված ու կրակոտ:
Ով քաղաքից էր հեռացել – նա թողել էր մշուշը ծեր, —
Մշուշը, որ կյանքի վրա մխաշաղախ ամպ էր դարձել:
Ով եկել էր գյուղից հեռու – նա թողել էր հողը խոնավ,
Որի վրա կյանքը հլու ո՛չ մի ոսկի հասկ չծնավ:
Ով եկել էր ստեպներից, նա թողել էր անծայրածիր
Լայնությունը հորիզոնի, որ իր համար բանտ էր դարձել:
Ով քաղաքից էր հեռավոր, ուր մառախուղ էր անորոշ՝
Նա բերել էր թոքախտավոր սիրտը, որպես կարմիր դրոշ: —
Ով եկել էր, թողած հեռուն անծայրածիր մութը գյուղի՝
Բերել էր իր մկաններում բեղմնավորված ուժը հողի:
Ով եկել էր ստեպներից, ուր ապրում էր որպես գերի —
Բերել էր իր լուրթ աչքերում լայնությունը ստեպների…
Ընբոստացած, խելագարված, չտանելով հին կյանքը էլ՝
Անծիր դաշտում այդ հավաքված՝ նրանք կռվի էին ելել:

IV

Մայր էր մտնում իրիկնային արևը՝ թեժ լույսով վառված:
—
Ու երգելով կռվում էին ամբոխները խելագարված: —
Դաշտն էր դեմը՝ փռված էր նա շառագունած ու արևուն,
—
Ու հեռևում, ճամփի վրա հսկա քաղաքն էր երևում: —
Ծո՛ւյլ նազանքով, իրիկնային արևի տակ անփույթ փռված՝
Պսպղում էր քաղաքը հին՝ հազարերանգ մի զանգրված:
Հեռո՛ւ, հեռո՛ւ, անծայր ու լայն, տարածվել էր քաղաքը հին —
Լողանում էր կարծես մարմանդ մշուշի մեջ իրիկնային:

Հաղթ շենքերը, բարձր ցցված, կարծես կախված կարմիր օդում՝
Հետզհետե մթնում էին, անգունանում ու աղոտում:
Հեռու հրով միայն վառված պատուհանները ապակի
Փայլում էին արյունամած վերջին հրին արեգակի.
Արևի դեմ փայլում էին հրաբոսոր՝
Բոլնկվել էր նրանց սրտում տագնապը սուր…
Եվ երկընքի սիրտը մխված բևեռների պես արնաքամ՝
Փայլում էին արյունամած ծխնելույզներն հսկայական:
Ծուխ չէր ելնում նրանց փողից՝ չէին փնչում երկինքն ի վեր.

Չէր կարծրանում նրանց ծուխից իրիկնային երկինքը էլ:
—
Լոկ մշուշը իրիկնային թանձրանում էր հետզհետե —
Ու մշուշում կորչում էին ծխնելույզները երկաթե: —

V

Իսկ քաղաքից դեպի հարավ՝ ահատեսիլ ու հաղթական՝
Երևում էր երկաթուղու կայարանը հսկայական:
Լսվում էր մերթ շոգեկառքի սուլոցը սուր հեռու մուժում —
Մորթում էին կարծես այնտեղ խելագարված մի անասուն…
Ճչում էր սուր, հուսակտուր, ու հուսահատ ձայնը նրա,
Որպես անդարձ մահի մի լուր տարածվում էր դաշտի վրա: —
Ցրված էր նա, կայարանը, հսկա ու հաղթ, նրանց առաջ: —
Ու հանգույցից կայարանի, դաշտովը մեկ լայնատարած՝
Դեպի հյուսիս, դեպի հարավ, ու արևմուտք, ու արևելք —

Конец ознакомительного фрагмента.

Текст предоставлен ООО «ЛитРес».

Прочитайте эту книгу целиком, купив полную легальную версию на ЛитРес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.